ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Երևան-2017թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում 2016-2017 թթ. տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացված վարչատարածքային և օրենսդրական փոփոխությունների արդյունքում հնարավորություն է ընձեռվել խորացնելու լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականությունը՝ նոր կազմավորված բազմաբնակավայր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահելով ավելի մեծ ծավալի լիազորություններ, մեծացնելով դրանց դերը հանրային կառավարման համակարգում՝ այդպիսով էլ ավելի նպաստելով տեղական ինքնակառավարման հիմքը հանդիսացող սուբսիդիարության սկզբունքի իրացմանը, համաձայն որի որոշումները պետք է ընդունվեն բնակչությանը որքան հնարավոր է մոտ մակարդակում՝ այդպիսի որոշումների ընդունման հնարավորությունն ու դրանց արդյունավետությունը երաշխավորելու պայմանով:

Զարգացման այս փուլում տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում պատրաստ է ապակենտրոնացման հետագա խորացմանը, որն առաջին հերթին ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմիններին լրացուցիչ լիազորությունների տրամադրում:

Սույն Ճանապարհային քարտեզը անմիջականորեն թղթակցվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների հետ:

Մինչ այժմ առկա ապակենտրոնացման ցածր մակարդակը պայմանավորված է համայնքների ցածր կարողություններով և համայնքների ՏԻՄ-երի նվազ հնարավորություններով:

Ճանապարհային քարտեզով սահմանված ապակենտրոնացումը ուղիղ համեմատական է համայնքների խոշորացման գործընթացին, մասնավորապես՝ խոշորացման արդյունքում վերակազմակերպված համայնքների ՏԻՄ-երը կարող են

իրականացնել պետական և տարածքային կառավարման մարմիններին վերապահված լիազորություններ:

Համայնքների խոշորացման արդյունքում շեշտակիորեն փոխվել է համայնքների ՏԻՄ-երի և աշխատակազմերի մարդկային կարողությունները, համայնքները ունակ են աշխատակազմերը համալրելու մասնագիտական կարողություններ և հմտություններ ունեցող ծառայողներով և աշխատողներով:

Մասնագիտական բարձր ունակություններ ունեցող կադրային ռեսուրսների առկայության պայմաններում հնարավոր է կազմակերպել և իրականացնել լիազորությունների ապակենտրոնացումը:

Այս հանգամանքի կարևորությունը կայանում է նրանում, որ Ճանապարհային քարտեզով նախատեսված լիազորությունները հիմնականում կրում են հանրային ծառայություններ մատուցելու բնույթ, և հետևաբար այդ ծառայությունների պատշաճ մատուցման տեսանկյունից ամենահիմնական գործոնը համարվում է ՏԻՄ-երի մարդկային կարողությունները:

Սույն Ճանապարհային քարտեզով սահմանված լիազորությունների ապակենտրոնացման հիմնական եղանակը նախանշված է որպես պատվիրակում:

Ճանապարհային քարտեզով ապակենտրոնացման հիմնական ձևաչափ է սահմանվել լիազորությունները՝ համայնքների ղեկավարներին փոխանցելու, որպես պետության կողմից պատվիրակված լիազորություններ:

Սույն Ճանապարհային քարտեզով պատվիրակումը որպես ապակենտրոնացման միջոց սահմանվել է, հիմնականում հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքների խոշորացման արդյունքում համայնքների մեծ մասը դեռևս չունեն այն ֆինանսական հնարավորությունները և ռեսուրսները, որպեսզի իրենց սեփական միջոցներով կազմակերպեն և իրականացնեն այդ լիազորությունները:

Ճանապարհային քարտեզով սահմանված ապակենտրոնացվող լիազորությունների շարքը **որևէ կերպ սահմանափակ չէ**, դրանք արտահայտում են տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի այս փուլում այժմեական և հնարավոր համարվող **պատկերացումները**, հետևաբար դրանում հիմնավոր փոփոխություններ կամ լրացումներ կատարելու խոչընդոտները բացակայում են:

Հետագա ապակենտրոնացման համապարփակ տեսլականը հիմնականում ընդգրկում է բնակչությանը ծառայություններ մատուցելու բնագավառները, մասնավորապես՝

կրթության բնագավառում՝ հանրակրթական դպրոցների կառավարումը, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարումը.

առողջապահության բնագավառում՝ պոլիկլինիկ ծառայությունների կազմակերպումը և իրականացումը, բազմապրոֆիլ բժշական հաստատությունների կառավարումը.

մշակույթի բնագավառում՝ կենտրոնացված գրադարանների, մարզային կամ քաղաքային նշանակության թատրոնների, թանգարանների, տուն-թանգարանների կառավարումը և այլն:

Ճանապարհային քարտեզը սկիզբ է դնում ապակենտրոնացման քաղաքականության տեսլականի իրագործմանը:

ՏԻՄ-երի կարողությունների շարունակական հզորացման պարագայում, պետական և տարածքային կառավարման մարմիններին վերապահված բազմաթիվ լիազորություններ հնարավոր կդառնան վերապահել համայնքների ՏԻՄ-երին:

ՏԻՄ-երի ունակությունների և կարողությունների հզորացման տեսանկյունից ***նպատակամետ հիմնական սցենարը*** համարվում է համայնքների խոշորացման գործընթացի շարունակականության ապահովումը և դրա արդյունքում համայնքների համար ֆինանսական եկամուտների նոր աղբյուրների հնարավորության ստեղծումը:

Վերը նշված սցենարի իրականացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը շարունակական քաղաքականություն է իրականացնում վարչատարածքային բարեփոխումները ավարտին հասցնելու մասով:

Պարբերաբար նախաձեռնվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում կատարելագործում են համայնքներին ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և տրամադրման մեխանիզմները և գործիքակազմերը, համայնքների կողմից որպես սեփական եկամուտ հավաքագրվող տեղական տուրքերի և վճարների համակարգը, ինչպես նաև նախատեսվում են վարչատարածքային բարեփոխումների ավարտից հետո նախաձեռնել և մշակել օրենսդրական համապարփակ փոփոխություններ, համայնքների սեփական եկամուտների նոր աղբյուրների հնարավոր ավելացման մասով:

Վերը նշված ծրագրերի իրագործման արդյունքում արդարացիորեն հնարավոր կլինի կյանքի կոչել ապակենտրոնացման քաղաքականության տեսլականը իր բոլոր բաղադրիչներով հանդերձ:

Բարեփոխումների և նախատեսվող ապակենտրոնացման արդյունքում **ակնկալվող արդյունքը** կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունում կձևավորվեն կարող, ֆինանսական կայուն ռեսուրսներով օժտված համայնքներ, որոնց կարողություններով և ուժերով հնարավոր կլինի բնակիչներին հասանելի և մատչելի ձևով մատուցելու բազմաշարք հանրային ծառայություններ:

Սույն ճանապարհային քարտեզի իրագործումը իրապես հնարավորություն կընձեռնի ծավալել ապակենտրոնացման քաղաքականության խորացման և դրա արդյունքում տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորություններ, մասնավորապես՝ պատվիրակված լիազորություններ վերապահելու խնդիրների շուրջ, որոնցում հիմնական խոչընդոտ է համարվել համայնքների մեծ թիվը և դրանց կարողությունների ցածր մակարդակը:

Համայնքների միավորման և դրանց կարողությունների ամրապնդմանը միտված վարչատարածքային վերջին բարեփոխումներն արդեն իսկ ստեղծում են բավարար հիմքեր լիազորությունների ապակենտրոնացում իրականացնելու համար:

Սույն ճանապարհային քարտեզի կազմման համար առաջին նախադրյալներ են համարվում լիազորությունները, որոնք այժմ վերապահված են տարածքային կառավարման և պետական կառավարման մարմիններին:

Համայնքների ՏԻՄ-երի լիազորությունների ընդլայնման ուղղությամբ հատկանշական էր 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված նոր խմբագրությամբ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը:

Լիազորությունների ապակենտրոնացման առումով, օրենքում լրացված մոտ 36 լիազորությունների մի մասը կրում են ապակենտրոնացնող բնույթ, դրանցից հատկապես հատկանշական են **հետևյալները՝**

1. Համայնքի ղեկավարի գործունեության նոր՝ **արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում** սահմանված սեփական և պետության պատվիրակած լիազորությունները:

Մասնավորապես՝

- ✓ համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը,
- ✓ համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը,
- ✓ համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծումը,

- ✓ քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր ստեղծումը,
- ✓ իրականացնում է վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար,
- ✓ փրկարարական աշխատանքների կազմակերպումը համայնքի տարածքում,
- ✓ արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումների իրականացումը համայնքի տարածքում:

2. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունը առ այն, որ նա կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը:

3. Սոցիալական պաշտպանության բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարի սեփական լիազորությունները, որոնք անմիջականորեն առնչվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովման հետ:

Ընդ որում, 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի հաստիք, որի հիմնական իրավունքներն ու պարտականությունները ևս սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

4. Գյուղատնտեսության բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարի սեփական լիազորություններից առաջինն առ այն, որ համայնքի ղեկավարն իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

5. Համայնքի ղեկավարի գործունեության նոր՝ **զբոսաշրջության բնագավառում** սահմանված սեփական լիազորությունները:

Այս բնագավառում օրենքով համայնքի ղեկավարի համար սահմանվել են հետևյալ լիազորությունները՝

- ✓ գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը,
- ✓ զբոսաշրջության վարչական ռեգիստրի վարման նպատակով՝ համապատասխան տեղեկատվություն է տրամադրում ռեգիստրը վարող լիազոր մարմնին,

- ✓ համայնքում սահմանում և տրամադրում է հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և օտարերկրյա զբոսաշրջային ավտոբուսների համար,
- ✓ զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ,
- ✓ իր լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներով խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը:

Լիազորությունների ապակենտրոնացման առումով, 16.12.2017թ. ընդունված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը կարգավորումներ է առաջադրել նաև Գյումրի և Վանաձոր համայնքների համար:

Հատկապես հատկանշական են օրենքով նշված երկու համայնքներին պետության պատվիրակած **հետևյալ լիազորությունները՝**

- համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով.
- օրենքով սահմանված կարգով մասնակցում է պետական սեփականություն համարվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների կառավարմանը.
- համայնքի տարածքում իրականացնում է պետական սոցիալական ապահովության ծրագրերը.
- իրականացնում է բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքները համայնքի տարածքում:

Այսպիսով, լիազորությունների վերապահման և ապակենտրոնացման գործընթացը կազմակերպելու համար 16.12.2016թ. ընդունված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը ստեղծել է բավարար հիմքեր և սահմանել է դրանց իրականացումն կազմակերպելու համար օրենսդրական համապատասխան գործիքակազմեր:

Ճանապարհային քարտեզով նախատեսվող լիազորությունների ապակենտրոնացումը և դրա հետ կապված գործողությունները բխում են <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի դրույթներից և նպատակ ունեն ապահովելու այդ և այլ օրենքներով նախատեսված և նախատեսվելիք լիազորությունների իրացումը:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն ճանապարհային քարտեզով նախատեսվում է կազմակերպել և իրականացնել **հետևյալ լիազորությունների ապակենտրոնացումը**.

- Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների (գյուղական բժշկական ամբուլատորիաներ, առողջության կենտրոններ, առողջության առաջնային պահպանման կենտրոններ) գործունեության կազմակերպումը և կառավարումը.
- Հայաստանի Հանրապետության միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանությունն ու շահագործումը.
- Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների շենքերի պահպանությունը և օգտագործումը.
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքներում անասնաբուժական ծառայության կազմակերպումն ու իրականացումը.
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպումը.
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքներում նոտարական ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը.
- Սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 1

Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների (գյուղական բժշկական ամբուլատորիաներ, առողջության կենտրոններ, առողջության առաջնային պահպանման կենտրոններ) **գործունեության կազմակերպումը և կառավարումը**.

Սկզբնական փուլում առաջարկվում է համապատասխան խոշորացված բազմաբնակավայր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կառավարմանը հանձնել մարզի տարածքում գտնվող բոլոր արտահիվանդանոցային բժշկական սպասարկում իրականացնող հաստատությունները (ամբուլատորիաները), որոնք ներկայումս մեծ մասամբ ունեն մարզային ենթակայության կարգավիճակ:

Հայաստանի Հանրապետության համայնքներում գործող բուժ.ամբուլատորիաների և առողջության առաջնային պահպանման կենտրոնների

մի մասը համարվում են համայնքային ենթակայության, այսինքն ունեն համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, սակայն ստվար զանգվածը դեռևս գտնվում է մարզային ենթակայության ներքո:

Բուժ.ամբուլատորիաների մասով ամբողջական համայնքային ենթակայության անցում կատարելու համար առկա են օրենսդրական հիմքեր:

Մասնավորապես՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով համայնքի ղեկավարի համար սահմանված է հետևյալ պատվիրակված լիազորությունը. <<կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը>>:

Սույն լիազորության ապակենտրոնացմամբ, համայնքի ՏԻՄ-երին կվերապահվի առողջապահական տվյալ հաստատության կառավարման գործառույթը, ինչ վերաբերում է ոլորտային նեղ մասնագիտական հսկողությանը, ապա այն որպես պատվիրակված լիազորություն կիրականացվի մասնագիտական հսկողության մարմնի՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից, տեսչական ստուգումների մասով կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան տեսչական մարմնի լիազորությունները:

Նշված լիազորությունը կազմակերպվելու և իրականացվելու է **պետական բյուջեի միջոցների հաշվին,** որպես համայնքի ղեկավարի պետության կողմից պատվիրակված լիազորություն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մի շարք համայնքներում ամբուլատորիաների գործունեության կազմակերպումն ու կառավարումը Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով արդեն իսկ տրվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը և վերջիներս արդեն իսկ համարվում են համայնքային ենթակայության հաստատություններ, ինչպես նաև ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով, առաջարկվում է ներկայացվող լիազորության ապակենտրոնացումը իրականացնելու ժամանակահատվածի ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերը նշված գործընթացը կազմակերպելու և իրականացնելու նպատակով նախատեսվում են հետևյալ գործողությունները.

- ✓ **Մինչև 2018 թվականի հունիսի 1-ը** մշակել և կառավարության կողմից հավանության արժանացնել մարզային ենթակայության գյուղական ամբուլատորիաները, առողջության կենտրոնները, առողջության առաջնային պահպանման կենտրոնները համայնքային ենթակայությանը փոխանցելու

որոշումները՝ կից հավելվածներով ներկայացված ըստ մարզերի ամբուլատորիաների ցանկերին համապատասխան:

- ✓ **Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը** կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված վերը նշված համապատասխան որոշումների կիրարկումն ապահովելու գործընթացը, մասնավորապես՝ պետական հաշվեկշռից գույքի փոխանցումն համայնքային հաշվեկշիռ, համայնքների ավագանիների կողմից համայնքների բյուջեներում և համայնքային ենթակայության մարմինների ցանկերում համապատասխան փոփոխությունների կատարում, ըստ ենթակայության փոխանցվող հաստատությունների կազմակերպա-իրավական ձևերի փոփոխությունների իրականացում և համապատասխանաբար իրավաբանական անձանց գրանցում իրականացնող պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումներում արդեն իսկ վերակազմակերպված հաստատությունների հիմնադիր փաստաթղթերի՝ այն է կանոնադրությունների գրանցում և գրանցման վկայականի ձեռբերում:

Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների գործունեության կազմակերպման և կառավարման լիազորության ապակենտրոնացման գործընթացը կազմակերպելու իրականացնող շահագրգիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն
- ՀՀ մարզպետարաններ
- ՀՀ խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 2

Հայաստանի Հանրապետության միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանությունն ու շահագործումը

Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականից սկսված վարչատարածքային փոփոխությունների արդյունքում կազմավորվել և ձևավորվել են նոր վարչատարածքային միավորներ՝ խոշորացված բազմաբնակավայր համայնքներ: Բազմաբնակավայր համայնքները իրենց վարչական սահմաններում ընդգրկում են միավորված նախկին համայնքների տարածքները, հետևաբար և ենթակառուցվածքները:

Հայաստանի Հանրապետությունում ներհամայնքային ճանապարհների պահպանության և շահագործման իրավասությունը վերապահված է համայնքների

ղեկավարներին, իսկ միջհամայնքային ճանապարհների դեպքում՝ տարածքային կառավարման մարմիններին, այն է մարզպետարաններին:

Համայնքների խոշորացման արդյունքում նախկին միջհամայնքային ճանապարհների կարգավիճակը վերաձևակերպվում է ներհամայնքային կարգավիճակի, քանի որ միավորվող համայնքները խոշորացված համայնքի կազմում հանդես են գալիս բնակավայրի կարգավիճակով, հետևաբար բնակավայրերն իրար միացնող ճանապարհները համարվում են ներհամայնքային ճանապարհներ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, առաջարկվում է կազմակերպել և իրականացնել միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության և շահագործման լիազորության ապակենտրոնացում:

Այս լիազորությունը նախատեսվում է մարզպետարաներից փոխանցել համապատասխան խոշորացված բազմաբնակավայր համայնքների ղեկավարներին:

Սույն լիազորության ապակենտրոնացման պարագայում, համապատասխան ենթակառուցվածքի նկատմամբ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը վերապահվում է բազմաբնակավայր համայնքի ՏԻՄ-երին, ինչ վերաբերում է այդ ճանապարհների վերանորոգման նկատմամբ հսկողությանը, ապա **պետական միջոցների հաշվին** վերանորոգում և պահպանություն իրականացվելու դեպքում, այն կկատարվի ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տեսչական մարմնի կամ համապատասխան մարզպետարանի կողմից:

Նշված լիազորությունը կկազմակերպվի և կիրականացվի **պետական բյուջեի բյուջեի միջոցների հաշվին**, այսինքն մինչ այժմ, այդ նպատակով մարզպետարաններին տրված ֆինանսական միջոցները կուղղվեն համայնքներ:

Նշված լիազորությունը ապակենտրոնացնելու համար առկա է իրավական հիմք, այն է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Մեջբերված դրույթի համաձայն, համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն կազմակերպում է **համայնքային ենթակայության ճանապարհների**, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների **պահպանումը և շահագործումը**:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Առաջարկվող լիազորության իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է հետևյալ գործողությունը.

- ✓ **Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը** մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը արժանացնել վերը նշված լիազորության փոխանցման (փորձնական, մի քանի խոշորացված համայնքներում, օրինակ Մեղրի, Ամասիա, Սարապատ, Աշոցք, Արփի) կիրարկումն ապահովող որոշում, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքով ամրագրված նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքների սահմանները և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության և շահագործման լիազորության ապակենտրոնացումը կազմակերպելու գործընթացի շահագրգիռ **իրականացնող մարմիններն են՝**

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը
- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը
- ՀՀ մարզպետարանները
- ՀՀ խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 3

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների շենքերի պահպանությունը և օգտագործումը

Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական դպրոցներից՝ հիմնական դպրոցները գտնվում են մարզային ենթակայության ներքո (բացառությամբ՝ Երևան քաղաքի), իսկ ավագ դպրոցները Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության: Հետևաբար և հանրակրթական դպրոցների շենք-շինությունների պահպանության և օգտագործման լիազորությունն վերապահված է համապատասխանաբար այդ մարմինների իրավասությանը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում իրականացված և իրականացվող վարչատարածքային բարեփոխումները, որոնց արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում են համայնքների նոր կարողություններով օժտված տեղական ինքնակառավարման մարմիններ, և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված շենք-շինություններին աշխարհագրական տեսակետից ամենամոտը գտնվող հանրային իշխանության մարմինները

համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններն են, ուստի առավել նպատակահարմար է նշված ենթակառուցվածքների պահպանության և օգտագործման մասով իրավասություններ վերապահել նաև խոշորացված բազմաբնակավայր համայնքների ղեկավարներին, որպես պետության պատվիրակված լիազորություն:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով համայնքի ղեկավարին վերապահված է հետևյալ սեփական լիազորությունը. <<կազմակերպում և կառավարում է **համայնքային ենթակայության դպրոցների**, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.>>:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են միայն օրենքով:

Սույն լիազորության ապակենտրոնացման պարագայում, համայնքի ՏԻՄ-երին հնարավորություն կընձեռվի մասնակցելու դպրոցների շենք-շինությունների օգտագործման գործընթացին, իսկ ինչ վերաբերում է դպրոցների հետ կապված մնացած բոլոր իրավասություններին, ապա դրանք կպահպանվեն և մարզպետարանի մասով, և կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի մասով:

Սույն լիազորությունը կկազմակերպվի և կիրականացվի **պետական բյուջեի միջոցների հաշվին,** որպես համայնքի ղեկավարի պետության կողմից պատվիրակված լիազորություն:

Հիմք ընդունելով Սահմանադրության 182-րդ հոդվածով սահմանված դրույթը, ինչպես նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի վերը նշված հոդվածում պետությանը պատկանող հանրակրթական դպրոցների վերաբերյալ համապատասխան լիազորությունն ամրագրող դրույթի բացակայությունը, առաջարկվում է այս լիազորության ապակենտրոնացումը կազմակերպել և իրականացնել առաջին հերթին համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Այս լիազորության ապակենտրոնացումը կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները.

- ✓ **Մինչև 2018 թվականի հունիսի 1-ը** մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը արժանացնել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:
- ✓ **Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը** ընդունել վերը նշված օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքները:
- ✓ **Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը** ապահովել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հանրակրթական դպրոցների շենք-շինությունների փոխանցումը պետական հաշվեկշռից համապատասխանաբար համայնքային հաշվեկշիռներ:

Հանրակրթական դպրոցների շենք-շինությունների պահպանության և օգտագործման իրավասությունը համայնքների ղեկավարներին վերապահելու գործընթացը կազմակերպելու համար իրականացնող շահագրիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը.
- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը
- ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը
- ՀՀ մարզպետարանները
- ՀՀ խոշորացված բազմաբնակավայր համայնքի ՏԻՄ-երը:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 4

Համայնքում, ելնելով առկա անասնագլխաքանակից, անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումը, սահմանել որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն՝ ապահովելով դրա իրականացումը համայնքային հաստիքային անասնաբույժի միջոցով

Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական ծառայությունները առ այսօր մատուցվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայությամբ գործող <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից:

Համայնքի ղեկավարին ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, անասնաբուժության բնագավառում վերապահված են, թե սեփական և թե պատվիրակված լիազորություններ, որոնք կրում են բացառապես աջակցող բնույթ:

Սույն լիազորությունը որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն, պետությունից դեպի համայնք փոխանցելը, ենթադրում է համայնքային

մակարդակում և համայնքային միջոցների հաշվին համայնքային անասնաբույժի հաստիքի ձևավորում և պահպանում:

Այս իմաստով, սույն լիազորության նկատմամբ բոլոր իրավասությունները փոխանցվում են համայնքի ՏԻՄ-երին, իսկ պետական լիազոր մարմնի կամ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայությամբ գործող <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից կտրվեն համապատասխան մասնագիտական մեթոդական ցուցումներ և աջակցություն, կապահովվեն համապատասխան դեղորայքային միջոցներով:

Սույն լիազորությունը կկազմակերպվի և կիրականացվի **համայնքային բյուջեի միջոցների հաշվին,** որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ որդեգրած քաղաքականությունը, առաջարկվում է անասնաբուժական գործունեության կազմակերպումը, որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն՝ ապակենտրոնացնել, ելնելով համայնքում առկա անասնագլխաքանակից, անասնաբուժական ծառայության գործունեության կազմակերպումն ապահովել համայնքային հաստիքային անասնաբույժի միջոցով:

Բացի լիազորության ապակենտրոնացումից, առաջարկվում է նաև <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու միջոցով՝ համայնքներում սահմանել տեղական վճար՝ անասնաբույժի ծառայություններից օգտվելու նպատակով, որը և կծառայի անասնաբույժի հաստիքի պահպանման համար:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նշված գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ գործողություններն են՝

- ✓ **Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը** մշակել, կառավարության հավանությանը արժանացնել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել, ինչպես նաև Օրենսդրի կողմից ընդունել <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Անասնաբուժության մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> և <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը:
- ✓ **Մինչև 2018 թվականի հունիսի 1-ը** մշակել և կառավարության հավանությանը արժանացնել վերը նշված օրենքների փոփոխությունների կիրարկումն

ապահովող որոշումը և բոլոր խոշորացված բազմաբնակավայր համայնքներում ավագանիների կողմից համապատասխան որոշումներով սահմանել նոր հաստիքացուցակներ՝ ներառելով անասնաբույժի հաստիքներ՝ բնակավայրերի և անասնագլխաքանակների թվաքանակները հաշվի առնելով:

Անասնաբուժական ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը խոշորացված համայնքների ղեկավարներին վերապահելու գործընթացը կազմակերպելու համար իրականացնող շահագրիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
- ՀՀ մարզպետարաններ
- ՀՀ խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 5

Խոշորացված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպումը

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառի քաղաքականություն մշակող մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է, ի դեմս դրա կազմում գործող համապատասխան գործակալության, իսկ կոնկրետ ՔԿԱԳ լիազորությունները իրականացնող տարածքային մարմինները գտնվում են համայնքային ենթակայության ներքո:

ՔԿԱԳ տարածքային մարմինները տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում նախկին շրջանների թվաքանակի սկզբունքով, և գտնվում են նախկին շրջկենտրոններում:

Հայաստանի Հանրապետությունում իրականացրած և իրականացվող վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորվել են շուրջ 21 քաղաքացիների սպասարկման գրասենյակներ և նախատեսվում է այդ գրասենյակների թիվը ավեացնել ընդգրկելով գրեթե բոլոր խոշորացվող համայնքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ծառայությունը պարբերաբար մատուցվող ծառայություն է, շատ համայնքներ և բնակավայրեր աշխարհագրական իմաստով հեռու են գտնվում նախկին շրջկենտրոններից, ինչպես նաև հիմք ընդունելով խոշորացված համայնքներում քաղաքացիների սպասարկման գրասենյակների առկայությունը առաջարկվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության կազմակերպման լիազորությունը

ապակենտրոնացման միջոցով վերապահել խոշորացված բազմաբնակավայր համայնքների ղեկավարներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022թթ. ծրագրի, նախատեսվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները վերակազմակերպել որպես սպասարկման կենտրոններ, հաշվի առնելով մի շարք հանրային ծառայությունների <<մեկ պատուհան>>-ի միջոցով տրամադրումն ապահովվելու անհրաժեշտությունը և պետական քաղաքականության նպատակը:

Նշված լիազորության պատվիրակման և հետևաբար՝ ապակենտրոնացման արդյունքում այսօր գործող ՔԿԱԳ տարածքային մարմինները կվերակազմակերպվեն տարածքային սպասարկման կենտրոնների և կպահպանվեն, քանի որ հիմնականում նախկին շրջկենտրոնները դառնում են խոշորացված համայնքների կենտրոններ, և լրացուցիչ նման լիազորությամբ կօժտվեն մյուս խոշորացված համայնքների ղեկավարները, որոնց համայնքային կենտրոնները չունեն նախկին շրջկենտրոնի կարգավիճակ:

Սույն լիազորության ապակենտրոնացման պարագայում, համայնքի ՏԻՄ-երին կվերապահվի համապատասխան մասնագետ նշանակելու կամ արդեն իսկ գործող մասնագետի վրա նշված լիազորությամբ պայմանավորված պարտականությունները դնելու իրավասությունը:

Մնացած բոլոր իմաստներով, այդ թվում մասնագիտական և վարչական, տվյալ լիազորության իրականացումը կատարվելու է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված պետական քաղաքականության համապատասխան և տարածքային սպասարկման կենտրոնների մեթոդական ցուցումների հիման վրա:

Նշված լիազորության փոխանցման համար սահմանափակող օրենսդրական հիմքեր չկան, փոխարենը <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը միանգամայն տալիս է այն ապակենտրոնացնելու լիարժեք հնարավորությունը, քանի որ նշված դրույթը քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունը վերապահել է որպես պատվիրակած լիազորություն համայնքների ղեկավարներին՝ ընդհանրական սկզբունքով, առանց որևէ տարանջատման:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության վերակազմակերպման արդյունքում, այսօր գործող տարածքային բաժինները կվերակազմակերպվեն սպասարկման կենտրոնների, իսկ խոշորացված այն համայնքների կենտրոնները, որոնք չունեն նախկին շրջկենտրոնի կարգավիճակ, իրենց աշխատակազմերում կունենան առանձին հաստիք, իսկ դրա ստեղծման

անհնարինության պարագայում, այդ հաստիքով պայմանավորված պարտականությունները կդրվեն որևէ համայնքային ծառայողի վրա:

Նշված համայնքային ծառայողին կտրվեն համապատասխան հնարավորություններ և կվերապահվեն համապատասխան իրավասություններ, խոշորացված համայնքի տարածքում բնակչությանը քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայություններ մատուցելու նպատակով:

Համայնքային ծառայողը կապակցված կլինի քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական համակարգին և համապատասխան տարածքային սպասարկման կենտրոնին՝ էլեկտրոնային և փաստաթղթային եղանակներով միասնական համակարգային փաստաթղթաշրջանառությունը կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Համայնքային ծառայողը հնարավորություն կունենա ստանալու համապատասխան տարածքային սպասարկման կենտրոնից և մարզային բաժնից մասնագիտական խորհրդատվություն, ստանալու մասնագիտական և մեթոդական ցուցումներ:

Սույն լիազորություն կկազմակերպվի և կիրականացվի **պետական բյուջեի և համայնքային բյուջեի միջոցների հաշվին**:

Պետական բյուջեի միջոցների մասով, արդեն իսկ գործող ՔԿԱԳ բաժինների ֆինանսավորումը կվերաբաշխվի, իսկ այն համայնքներում որտեղ հնարավոր չի լինի վերաբաշխման արդյունքում ստեղծել հաստիք, ապա կստեղծվի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, կամ ընդհանրապես որևէ միջոց չի ծախսվի, այլ այդ պարտականությունները կդրվեն համայնքի աշխատակազմի որևէ համայնքային ծառայողի վրա:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նշված լիազորությունը խոշորացված համայնքների ղեկավարներին վերապահելու համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները.

- ✓ **Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը** մշակել և կառավարության հավանությանը արժանացնել Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության կազմակերպման լիազորությունը բոլոր խոշորացված համայնքներում իրականացնելու կիրարկումն ապահովող որոշում.
- ✓ **Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը** կազմակերպել և իրականացնել բոլոր խոշորացված համայնքների աշխատակազմերում համապատասխան

կառուցվածքային փոփոխությունները և նոր հաստիքացուցակների սահմանումը՝ ավագանիների համապատասխան որոշումների ընդունմամբ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության կազմակերպումն ու իրականացումը խոշորացված համայնքների ղեկավարներին վերապահելու գործընթացը կազմակերպելու համար իրականացնող շահագրիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ մարզպետարաններ
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 6

Խոշորացված բազմաբնակավայր համայնքներում, որպես պատվիրակված լիազորություն՝ նոտարական ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը

Հայաստանի Հանրապետությունում նոտարական ծառայությունների մատուցման բնագավառի քաղաքականություն մշակող մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն է, իսկ Նոտարների լիցենզավորման և նշանակման հետ կապված հարցերի համակարգման մասնագիտական լիազոր մարմինը ՀՀ Նոտարական պալատն է:

Նոտարն իր գործունեությունն իրականացնում է նոտարական գրասենյակում, որը պետք է գտնվի նրա համար սահմանված նոտարական տարածքում: Նոտարական տարածքը այն վարչատարածքային միավորն է, որի սահմաններում նոտարն իրականացնում է իր գործունեությունը:

Նոտարական տարածքները, նոտարական գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերի չափանիշները սահմանում է արդարադատության նախարարը:

Նոտարական տարածքները սահմանվում են գործարքների, հաճախորդների ակտիվության վրա հիմնված տարածքային բաժանման սկզբունքի, իսկ նոտարական գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերի չափանիշները՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի արդյունավետ կառավարման, անվտանգության ապահովման, ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:

Նոտարները նշանակվում են ՀՀ արդարադատության նախարարի կողմից:

Համաձայն <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի մեկ նոտարական տարածքում կարող է գործել մեկ կամ մի քանի նոտարական գրասենյակ:

Մեկ նոտարական գրասենյակում կարող են աշխատել նույն նոտարական տարածքում գործունեություն իրականացնող մեկ կամ ավելի նոտարներ:

Նոտարական տարածքները Հայաստանի Հանրապետությունում ձևավորված են նախկին շրջանների տարածքային համամասնությամբ, որը շատ դեպքերում դժվարացնում է նախկին շրջկենտրոնից մեծ հեռավորության վրա գտնվող համայնքների և բնակավայրերի բնակիչներին այդ ծառայությունները հասանելի դարձնելը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի բնակիչ համարվող անձանց՝ վարորդական իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար:

Սույն լիազորության ապակենտրոնացման պարագայում համայնքի ՏԻՄ-երին կվերապահվի նոտարական որոշակի գործողություններ իրականացնելու գործառույթներ, իսկ մասնագիտական իմաստով այն ամբողջությամբ կլինի պետական քաղաքականությունը մշակող մարմնի իրավասությունների ներքո:

Սույն լիազորությունը կկազմակերպվի և կիրականացվի **համայնքային բյուջեի միջոցների հաշվին,** որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն:

Համայնքի կողմից մատուցված նոտարական ծառայությունների դիմաց կգանձվի տեղական տուրք, որը կուղղվի համայնքային բյուջե:

Նոտարական ծառայությունները ապակենտրոնացնելիս, դրանց մատուցումը հնարավոր կլինի կազմակերպել և իրականացնել բազմաբնակավայր համայնքներում ձևավորված և ձևավորվելիք քաղաքացիների սպասարկման գրասենյակներում:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նշված լիազորությունը ապակենտրոնացնելու համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, իրականացնելով մասնավորապես հետևյալ գործողությունները.

- ✓ **Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** մշակել, կառավարության հավանությանը արժանացնել, ՀՀ Ազգային ժողով ներկայացնել և Օրենսդրի կողմից ընդունել <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նոտարիատի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքներում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքները:
- ✓ **Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը** մշակել և ընդունել ՀՀ արդարադատության նախարարի նոտարական տարածքների սահմանման մասին նոր հրաման ըստ խոշորացված համայնքների թվաքանակի տրամաբանության.
- ✓ **Մինչև 2021 թվականի հունիսի 1-ը** մշակել և կառավարության հավանությանը արժանացնել վերը նշված օրենքների կիրակումն ապահովող որոշումը, համապատասխանաբար իրականացնել խոշորացված համայնքների աշխատակազմերում կառուցվածքային փոփոխություններ և նոր հաստիքացուցակների սահմանում, ավագանիների որոշումներով:

Նոտարական ծառայության կազմակերպումն ու իրականացումը խոշորացված համայնքների ղեկավարներին վերապահելու գործընթացը կազմակերպելու համար իրականացնող շահագրիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ մարզպետարաններ
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ 7

Խոշորացված համայնքներում սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը

Սոցիալական պաշտպանության բնագավառի ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, որն այս ոլորտում իր գործունեությունը կազմակերպում է <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի և 25-րդ ու 26-րդ հոդվածների համաձայն ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1061-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված տարածքային մարմինների միջոցով, որոնք են՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝

1) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները (զբաղվածության տարածքային կենտրոնները) թվով 51,

2) աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինները (բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները)՝ թվով 27,

3) կառավարման ոլորտում գործող պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումները (սոցիալական ապահովության տարածքային կենտրոնները)՝ թվով 51.

2. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումները՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները և սոցիալական աջակցության տարածքային բաժինները՝ թվով 55:

Որոշմամբ սահմանվել է, որ.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) <<Զբաղվածության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների տրամադրման պայմաններն ու կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումները սոցիալական ծառայությունները տրամադրում են (իրենց լիազորություններն իրականացնում են) <<Պետական կենսաթոշակների մասին>>, <<Պետական նպաստների մասին>> ու <<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

4. Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի լիազորությունների իրականացմանը և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգին ու պայմաններին, ապա դրանք սահմանվել են Որոշման N 1 հավելվածով:

Սոցիալական ծառայությունների տրամադրումը որպես պատվիրակված լիազորություն իրականացվում է Երևան, Գյումրի, Վանաձոր, Ջերմուկ և Արարատ քաղաքներում՝ սկսած 2009թ.:

Այսպիսով, գործող <<Սոցիալական աջակցության մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքները թույլ են տալիս սոցիալական աջակցության բնագավառում սոցիալական ծառայությունների տրամադրման լիազորությունը պատվիրակել համայնքի ղեկավարին:

Սույն լիազորության ապակենտրոնացման պարագայում համայնքների ՏԻՄ-երին կվերապահվի կառավարման գործառույթը, իսկ մասնագիտական գործունեության կազմակերպման իմաստով այն ամբողջությամբ կկազմակերպվի և կիրականացվի սոցիալական ապահովության ոլորտի պետական մարմինների (նախարարություն, տեսչություն, ծառայություն, մարզպետարան) կողմից:

Սույն լիազորությունը կկազմակերպվի և կիրականացվի **պետական բյուջեի միջոցների հաշվին,** որպես համայնքի ղեկավարի պետության կողմից պատվիրակված լիազորություն:

Հաշվի առնելով համայնքների խոշորացման գործընթացի տեմպերը, ինչպես նաև 5000 և ավելի բնակիչ ունեցող համայքներում սոցիալական աշխատողի հաստիք ունենալու օրենսդրական պահանջը, առաջարկվում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեության կազմակերպումը և կառավարումը վերապահել խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-երին՝ որպես պետության պատվիրակված լիազորություն:

Սույն լիազորության ապակենտրոնացման գործողությունների ավարտ սահմանել 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

Նշված լիազորությունը ապակենտրոնացնելու համար անհրաժեշտ են.

✓ **Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը** սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրման ապակենտրոնացման ապահովում, միասնական

ընդունարանների ձևավորում՝ պետական կամ համայնքային նշանակության շենքերում, սեփականություն համարվող գույքի պետական հաշվեկշռից համայնքային հաշվեկշիռ փոխանցելու կազմակերպում և իրականացում, վարչական և վարչարարական գործողությունների կատարում (բաժինների վերակազմակերպում, կանոնադրական փոփոխություններ, պետական գրանցման փոփոխություններ և այլն): Սույն գործողությունն իրականացնելու համար բավարար է ՀՀ կառավարության համապատասխան որոշումը:

✓ Նույն ժամանակահատվածում ապահովել համայնքների սոցիալական աշխատողների համար հատուկ դասընթացներ «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ և այդ աշխատողների հավաստագրում: Սույն գորոծողությունը կարող է իրականացնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը:

Սոցիալական ապահովության պետական ծառայությունը Երևան քաղաքում ունի թվով 10 տարածքային բաժիններ, իսկ մարզերում՝ 41 տարածքային բաժիններ: Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմինները տեղակայված են մարզկենտրոններում և նախկին շրջկենտրոններում:

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի ձևավորման և վարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ապահովության ծրագրերի ֆինանսավորման համար հատկացված միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման, ինչպես նաև կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության նպաստների, պատվովճարի, դրամական օգնության և ծառայության միջոցով վճարվող սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների նշանակման և վճարման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ապահովմանը:

Նշված քաղաքականության իրականացումը ենթադրում է վերոհիշյալ սոցիալական իրավունքների՝ կենսաթոշակների և այլ դրամական վճարների նշանակման և վճարման գործընթացի, իրականացման կենտրոնացում՝ միաժամանակ ապահովելով այդ նպատակով քաղաքացիների հետ աշխատանքի ապակենտրոնացում (դիմումների ընդունումը՝ սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը որպես պատվիրակած լիազորություն իրականացնող մարմինների միջոցով կամ առցանց՝ իրական ժամանակի ռեժիմով դիմումների ներկայացում):

Վերոհիշյալ գործողությունների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում սահմանված քաղաքականությունն իրականացնելու են հիմնականում երկու խմբի մարմիններ՝ պետական կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման կենտրոնացված մարմին, որի աշխատողների և քաղաքացիների շփումը բացառվելու է, և սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային միասնական մարմին՝ համայնքային ենթակայության, որի աշխատանքներն իրականացվելու են ուղղակիորեն քաղաքացիների հետ տարվող աշխատանքի միջոցով (սոցիալական աշխատանքի ինստիտուտ):

Սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը խոշորացված համայնքների ղեկավարներին վերապահելու գործընթացը կազմակերպելու համար իրականացնող շահագրիռ մարմիններն են՝

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ մարզպետարաններ
- Խոշորացված բազմաբնակավայր համայնքների ՏԻՄ-եր:

Սույն ճանապարհային քարտեզը կազմվել և մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից:

Սույն ճանապարհային քարտեզի նախագծով սահմանված դրույթների շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ համաձայնեցման արդյունքում, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից կկազմվի և կմշակվի <<Լիազորությունների ապակենտրոնացման գործողությունների ծրագիր>>:

Սույն ճանապարհային քարտեզով նախատեսված գործողությունների և միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև իրականացման աշխատանքների համակարգման և ամբողջական կատարման պատասխանատվությունը վերապահվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը: